# ՔՐՈՆԻԿ

Բարսեղ էֆէնտի Հալաճեան նուիրած է ազգային Հիւանդանոցին 150 օսմանեան ոսկի։

Բագուի կուլտուրական ընկերութիւնը հրաման ստացած է փոխատուութիւններ հաստատելու՝ Բագուի և Գանձակի գիւղերուն մէջ։

Գահիրէի բարեգործական ընկերութիւնը 420 եգիպտական ոսկի ուղարկած է Հայաստան։

Պ. Լեւոն Սարգսեան կը դադրեցնէ իր «Մուրճ» ամսագիրը՝ որ գրական գեղեցիկ յիշատակներ կը թողու։

Ասխաբադի մէջ 2000 րուբլի հաւաքուած է Խրիմեան Հայրիկի անուամբ դպրոց մը բանալու համար։

Հայ ջութակահար Կիւտէնեան, 22 տարուան, մեծ համբաւ կը ստանայ Եւրոպայի մէջ և մեծ գովեստներ Անգլիացի, Ֆրանսացի, Աւստրիացի, Բելճ թերթերէ։

Մերկուրով հայ արձանագործը Խրիմեան Հ.ի գեղեցիկ կիսանդրի մը քանդակած է։ Բագուի կուլտուրական միութիւնը մտադիր է Աբովեանի արձանը կանգնելու։

Համբաւաւոր հայագէտ–լեզուաբան Հիւպշման ը վախճանած է. յարգանք իր բազմարդիւն անցեալին, զոր պիտի ծանօթացնենք։

Սպանուած է Եգիպտոսի մէջ՝ հանրածանօթ գրագէտ, հրապարակախօս, երգիծաբան Արփիար Արփիարեան։

Վսեմ. Բարթող փաշան 1500 ֆր. նուիրած է Արմաշի։

Կովկասի փոխարքան, արդեամբ Ա. Քալանթարի և Նպաստամատոյց Յանձնաժողովին, յանձն առած է 2,652,000 րուբլի խնդրել ներքին գործոց նախարարութենէն՝ հայ սովելոց համար։

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար 40,000 ոսկի նուիրած է ազգային կրթական գործին. 15000 Գալստեան վարժարանի համար, իսկ 25000 հայ համալսարանական ուսանողներու։

Ռուս կառավարութիւնը նաւթարդիւնաբերական խորհրդակցութեան համար լիազօրներ ընտրել հրամայած է բանուորներուն։ Ընտրուած են 15ի չափ սոցիալ–դեմոկրատ, 130 դաշնակցական։

Բարեգործական ընկերութիւնը յանձն առած է շարունակել Զէյթունի որբանոց–արհեստանոցը, որ փակուելու վտանգի մէջ էր։

# ՆԱՄԱԿԱՆԻ

Թիֆլիզ «Մշակ». — Դեկտեմբերի Բազմավէպին մէջ չարամիտ ակնարկութիւններ կը կարծէք գտնել Ձեր օրագրի մասին։ Ամենէն բարեացակամները անոնք չեն որ ոչ մէկ դիտողութիւն կը ներկայացնեն՝ մարդու մը կամ թերթի մը նկատմամբ։ Ի զուր բարոյական ցաւը կը ստեղծէք Ձեզ՝ Բազմավէպը Ձեր դէմ նկատելու։ Այսպիսի հասկացողութեանց առիթ չտալու համար միայն՝ չենք երկարեր խնդրոյն վրայ, անկեղծ փափագող ըլլալով Արծրունւոյ թերթի յաջողութեանց։

Կ. Պօլիս. Հ. Ս. Տ. Մ. — Ձեր ներկայացուցած քերթուածը՝ Ռըպուլի ծանօթ բանաստեղծութեան մը հետեւողութիւն՝ գեղեցիկ է լեզուական շնորհալի և ճապուկ արտայայտութեամբ։

Թիֆլիս. Գ. Ն. — Թուղթի տեսակի և լուսանցքի տարբերութիւն. Բազմավէպի գրական ծաւալը նոյն է միշտ. այս մասին ոչ մի փոփոխութիւն։

Վիեննա. Հ. Ն. Ակինեան. — Ըստ նոյն բանասէրի՝ նախնեաց գործածած Ծանրախօս մակդիրը պէտք է դնէիք Թորսվի տեղ. — Փուղզոնի տառադարձութեան մասին անպարտ էք։


ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1908 Թ.

# ՎՏԱԿ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Գինն է՝ Ռուսաստան 8 րուբլի, արտասահման 12 րուբլի, Պարսկաստան 9 րուբլի։ Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս–մաս, յունուարին 4 ր. մարտին 2 րուբ. և յունիսին 2 րուբլի։ Տարեկան բաժանորդները բացի օրաթերթից կը ստանան նաեւ մի ձրի յաւելուած – (200–300 մեծադիր երես)

«Գրական–Գիտական ժողովածու», որ լոյս է տեսնելու յունւար ամսին, աշխատակցութեամբ՝ Ա. Ահարոնեանի, Ա. Աղաբեկեանի, Ե. Թոփչեանի, Յով. Թումանեանի, Յ. Թադէոսեանի. Ա. Խանհակեանի, Գ. Խաժակի, Սիմ. Յակոբեանի, Միք. Յովհաննիսեանի, Լ. Նազարեանի, Գ. Ղազարեանի, Յ. Շահպազեանի, Ս. Շիրեանի և ուրիշների։

Դրամ փոխադրել անպայման հետեւեալ հասցէով. Тифлисъ, почтов. ящ. № 23. Левону В. Абовьяну.


digitised by A.R.A.R.@

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

*ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ*

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35–*րդ ՏԱՐԻ*)

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ** 10 *ռուբլի*, 6 *դոլլար*, 30 *ֆրանկ. ստորագրվել կարելի է միայն ամսի* 1*ից. յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով. ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունվում։*

*Դիմել* Rédaction du Journal « MSCHAK » TIFLIS (Caucase).

---

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# “ԱՆԱՀԻՏ„

*ԱԶԳԱՅԻՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ*

*ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ*

*Լոյս կը տեսնէ* 1908*ի Անահիտը ճոխ և հետաքրքրական բովանդակութեամբ.*

*Բաժանորդագինն է տարեկան՝* 12 *ֆր.* 2 *տոլար.* 4 *ռուբլի. հասցէ*

Mr. A. Tchobanian — 17 *Rue Labruyère. — PARIS*

---

## ՅՈՒՇԱՐԱՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

*Տարեկան գին՝* 5 *ռուբլի, արտաս.* 6*ր. կարելի է բաժանորդագրուիլ մաս մաս. հայ թատրոնի յոբելեանի առիթով պիտի տայ իր բաժանորդաց Ադամեանի գիպսէ մեդալիոնը։*

*Հասցէն.* Rédaction « Houcharar » Tiflis (Caucase) Sololagski, N. 14.

---

## ՀԱՅՐԵՆԻՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

The Hairenik Pub. Co. Boston mass, 27

= ԳԻՆ 10 ՑՐ. =

## ԵՐԿՐԻ ՁԱՅՆ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ,

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

---

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

| | | |
|---|---|---|
| *Թիֆլիս* | *տար.* | 4 *ր.* |
| *Գաւառ* | » | 4 *ր.* 50 *կ.* |
| *Ամերիկա* | » | 3 *դոլլար* |
| *Արտասահման* | » | 15 *ֆր.* |

*Խմբագրութեան հասցէն*

Rédaction de l'«Erkri Tzaïn»

Tiflis (Caucase)

Griboedovskaya, N. 16.

Maison Zoubaloft.

*Կարելի է բաժանորդագրվել նաեւ «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում և «փարոս» կեօսկում։*

digitised by A.R.A.R.@

# ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀՐԱՏ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԺՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

XVI գիրքը

*Գինն է՝ տարեկան չորս գրքի 5 րուբլի. Հասցէն.* Rédaction de la Revue « Azgagrakan Handess » TIFLIS (Caucase)

# “ԱՐԱՐԱՏ„

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1908

*Գինն է՝ Ռուսաստան* 4 *րուբլի, արտասս.* 5*ր. Հասցէն.* «Rédaction de la Revue Ararat» Etchmiadzine (Caucase).

# 1908 - ԲԱԶՄԱՎԷՊ - 1908

*Բազմավէպ, հանդէս Հայկական ճեմարանի, նուիրուած Ազգային գիտութեանց, Գեղեցիկ դպրութեանց, հայկական Այժմէութիւններու, կը ներկայացնէ Բանահիւսութիւններ և Թղթակցութիւններ՝ Հայոց պատմութեան, մատենագրութեան, գեղարուեստներու մասին. գրական բաժնին մէջ՝ քնարերգութիւններ, թատերերգութիւններ, վէպեր. նորութեանց բաժնին մէջ՝ տեղեկատուութիւններ նորագոյն գրքերու, հանդէսներու, դէպքերու մասին։ Իր նպատակն է բարձրացնել հայ ժողովուրդը՝ Գիտութեամբ, Գեղարուեստով, լիակատար գիտակցութեամբ իր Անցելոյն և իր Դարուն։ Գինն է ֆր.* 10, *տոլար՝* 2, *րուբլի՝* 4։ *Դիմել ուսումնական թղթակցութեանց համար.* Rédaction de la Revue “Bazmavep„. *բաժանորդագրութեան համար.*

“*Imprimerie Arménienne*„ — *St. Lazare* VENISE *(Italie)*

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

«ՍՐԲՈՅ ՀՕՐՆ

ԽԻԱԳՐԻ ՊՈՆՏԱՑԻՈՑ

ՎԱՐՔ

ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ»

Գին՝ ֆր. 6.

500 *մեծադիր էջերէ բաղկացեալ այս հատորը ոչ միայն Դ դարու յոյն նշանաւոր հեղինակի մը հայերէն հին թարգմանութիւնը կը ներկայացնէ, այլ ընդարձակ ներածութեանը մէջ կ'ուսումնասիրէ մեր Ե. դարու մատենագրութեան աղերսները Եւագրի հետ. Ս. Սահակայ, Եզնկայ, Մանդակունւոյ, Թաթլոյ և Վարոսի խրատուց, Ս. Գրոց նախադրութեանց գրքերը կը բաղդատէ Եւագրի հետ՝ նորանոր յայտնութիւններ ընելով. այսպէս՝ Եւագրի կեանքն և գործերը ճանչնալէ զատ՝ ընթերցողք կ'ունենան անուղղակի ուսումնասիրութիւնն և լուսաբանումը մեր Ե. դարու գրականութեան բազմաթիւ խնդիրներուն։*

ԲԱՑՈՒԱԾ Է

1908 ՏԱՐՎԱՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՀԱՍԿԵՐ»

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՄՍԱԳԻՐ

ԽՄԲԱԳՐ. Կ. ԼԻՍԻՑԵԱՆ

*գին* 9 *ֆր. մանկավարժ. բաժնով՝* 12 *ֆր.*

*«Հասկերին» համակրող ծնողների մի շրջանի ձեռնտւութեամբ խմբագրութիւնս հնարաւորութիւն է ստանում աւելի ճոխացնելու ամսագրի բովանդակութիւնն ու պատկերները։* 1908 *թ. լոյս են տեսնելու ի միջի այլոց, Ալ. Ահարոնեանի «Գունատ տղայ», Լէօի «Մեր բակի կեանքից», Յովհ. Թումանեանի հեքիաթները, Շանթի «Փռան առջեւ», և Սադալեանի «Օջախի պահողը»։ Ամսագիրը ունի նաեւ «Մանկավարժական գրադարան», ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարեւորագոյն հարցեր։ Հասցէն՝*
Tiflis (Caucase). Rédaction du journ. «Hasker».


digitised by A.R.A.R.@